ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԴԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկարամյա բեղմնավոր գիտա-մանկավարժական ու հասարակական գործունեության համար և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր ընկ. Մկրտիչ Գեղամի Ներսիսյանին պարգևատրել Լենինի շքանշանով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության Նախագահ՝ Ն. ՊՈԴԳՈՐՆԻ
ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության քարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՁԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 Նոյեմբերի 1970 թ.։

Մ. Գ. Ներսիսյանը ծնվել է 1910 թ. նոյեմբերի 25-ին, Հայկական ՍՍՀ Աշտարակի շրջանի Փարպի գյուղում։ 1927 թ. ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1931 թ.՝ Երևանի պետական համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի պատմության բաժինը։

1931—1941 թթ. Մ. Ներսիսյանը զբաղվել է գիտական աշխատանքով։ 1940 թ. նա նշանակվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտի դիրեկտոր։ 1941—1943 թթ. Մ. Ներսիսյանը մասնակցում է Հայրենական մեծ պատերազմին։

1943—1944 թթ. Մ. Ներսիսյանը աշխատում է Երևանի պետական համալսարանում, որպես պատմության ֆակուլտետի դեկան, 1944—1946 թթ.՝ գիտությունների նորաստեղծ ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատար, իսկ 1946—1950 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում, որպես նրա դիրեկտորի տեղակալ։

Մ. Գ. Ներսիսյանը 1950 թ. ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս և մինչև 1966 թ. աշխատում էր որպես ակադեմիայի վիցե-պրեզիդենտ (11 տարի), հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահ (5 տարի)։ 1950 թվականից մինչև օրս անընդմեջ ընտրվել է ակադեմիայի նախագահության անդամ։ 1966 թ. ապրիլին նա նշանակվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր և այդ պոստում մնում է առ այսօր։

Մ. Ներսիսյանը վարել է նաև մանկավարժական աշխատանք՝ տարիներ շարունակ դասավանդելով հայկական և ռուսական մանկավարժական ինստիտուտներում և պետական համալսարանում։ 1939 թ. նա պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1946 թ.՝ դոկտորական։ 1947 թ. Մ. Ներսիսյանին շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1961 թ.՝ Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Պրոֆ. Ներսիսյանը մեծ վաստակ ունի սովետահայ պատմական գիտության զարգացման բնագավառում։ Սկսած 1930-ական թթ. կեսերից նա հրատարակել է մի քանի տասնյակ մեծ ու փոքր աշխատություններ։ Դրանցից առանձնապես հարկ է նշել նրա հետևյալ մենագրությունները. «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» (1940), «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» (1955), «Դեկաբրիստները Հայաստանում» (1958), «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» (ռուսերեն, գիրք I, 1956, գիրք II, 1961), «1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» (ռուսերեն, 1965)։ Առանձնապես մեծ արձագանք գտավ նրա կազմած ու խմբագրած «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի և նյութերի ընդարձակ ու հարուստ ժողովածուն (ռուսերեն, 1966), ուր մերկացվում են թուրք ջարդարարների ոճրագործությունները՝ Աբդուլ Համիդից մինչև 1918 թ.։

Պրոֆ. Ներսիսյանը «Պատմա-բանասիրական հանդես»-ի հիմնադիրներից մեկն է և նրա գլխավոր խմբագիրը՝ «Հանդես»-ի ստեղծման օրից (1958 թ.) մինչև հիմա։

Մ. Ներսիսյանը 1938 թվականից Սովետական Միության կոմունիստական կուսակցության անդամ է։ Եղել է ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, իսկ ներկայումս հանդիսանում է Սովետական Միության Գերագույն սովետի դեպուտատ։ Պարգևատրված է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և վեց մեդալներով։

«Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրությունը սրտագին շնորհավորում է մեծարգո նոբելյարին՝ ծննդյան 60-ամյակի և Լենինի շքանշանով պարգևատրվելու առթիվ և ցանկանում նրան երկար տարիների բարեհաջող կյանք ու արդյունավոր աշխատանք։